

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը լրացնել նոր **110.⁴-րդ հոդվածով**:

«ՀՈՂՎԱԾ 110.⁴. Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունից մինչև վերջնական սպառումն ապրանքային շարժի բոլոր փուլերում ներկայացվող պահանջների խախտումը»

Օրգանական արտադրանքի պահպանման, փաթեթավորման, վերամշակման և իրացման պայմանների խախտումն առաջին անգամ արձանագրելիս՝

առաջացնում են տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկից հնգապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ վեցապատիկից մինչև յոթապատիկի չափով:

Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման, սերտիֆիկատի կեղծման, մակնշման կարգի խախտման դեպքում՝

առաջացնում են տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթապատիկից մինչև ութապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ իննապատիկից մինչև տասնապատիկի չափով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենսգրքի 238²-րդ հոդվածում «, 188-րդ և 213,2-րդ» բառերը փոխարինել «, 188-րդ, 213,2-րդ և 110⁴» բառերով:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

